ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ----------

Հայաստանի Հնարապետության Արագածոտնի մարզպետարանում 27.12.2011թ. տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ս.Սահակյան ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ա.Արսենյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Մ.Առաքելյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Հ.Դանիելյան ՀՀ ՏԿՆ աշխատակազմի ներկայացուցիչ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Համայնքների կողմից սեփական եկամուտների՝ հողի հարկի, գույքահարկի և տեղական տուրքերի հավաքագրման ընթացքի, աշխատավարձների ու սոցվճարների նախկին պարտքերի մարման մասին /զեկ.՝ Ֆ և ՍՏԶ վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

2. 2012 թվականի համայնքների բյուջեների կազմման գործընթացի մասին /զեկ.՝ Ֆ և ՍՏԶ վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

3. Մարզին տրամադրված 320 տոննա էլիտա և առաջին վերարտադրության գարնանացան գարու և եգիպտացորենի սերմացուների գումարների վերադարձման ընթացքի մասին / զեկ.՝գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

4. Մարզի համայնքներում բնակելի տների տիպային նախագծերի ներդրման աշխատանքների մասին /զեկ.՝ քաղաքաշինության վարչության պետ՝ Ա. ԴԱՎԱՅԱՆ/:

5. Այլ հարցեր և հայտարարություններ:

6. Մարզպետի ամանորյա շնորհավորական խոսքը ներկաներին:

Կից՝զեկուցողների զեկուցագրերը:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ՝

1. **ՖՍՏՋ վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

---Հետեւել, որպեսզի համայնքների կողմից սեփական եկամուտների և տեղական տուրքերի հավաքագրումը եւ աշխատավարձերի ու սոցվճարների նախկին պարտքերի մարումը մինչև տարեվերջ հասցվի 100 %-ի:

2.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱՋԱՏՅԱՆԻՆ

---Մարզին տրամադրված 320 տոննա էլիտա եւ առաջին վերարտադրության գարնանացան գարու և եգիպտացորենի սերմացուների գումարների վերադարձման գործընթացը ավարտել մինչեւ 2012 թ. հունվարի 10-ը և զեկուցել:

Քաղաքաշինության վարչության պետ Ա. ԴԱՎԱՅԱՆԻՆ

---Հետևել մարզի համայնքներում բնակելի տների տիպային նախագծերի ներդրման աշխատանքների ընթացքին: Ապահովել տիպային նախագծերի փաթեթների հանձնումը բոլոր համայնքապետարաններին և այդ մասին իրազեկումը բնակչությանը:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ